

Միջազգային Քննությունների Գրանցման Պայմաններ և Դրույթներ

1. Միջազգային քննության գրանցում

- ՓԱՍ Կենտրոնում անցկացվող միջազգային քննությունների գրանցումները կատարվում են բացառապես ՓԱՍ Կենտրոնի պաշտոնական կայքի՝ www.passttc.com-ի միջոցով, օնլայն տարբերակով:
- Գրանցման համար, մասնակիցը պետք է լրացնի իր անձնական տվյալները, որոնք են՝
 - Անուն Ազգանուն
 - Ծննդյան ամսաթիվ
 - Հեռախոսահամար
 - Էլ. հասցե
 - Անձնագրի սերիա/ID Քարտի համար
 - Անձնագրի գլխավոր էջի/ID Քարտի նկարը
- Տվյալները լրացնելուց հետո անհրաժեշտ է հաստատել գրանցումը՝ կատարելով օնլայն վճարում:

2. Վճարման կանոններ

- Գրանցումը հաստատելու համար, մասնակցի կողմից տրամադրված էլ. հասցեին և հեռախոսահամարին կուղարկվի վճարման հղում, որի օգնությամբ անհրաժեշտ է կատարել վճարում:
- Վճարումները կատարվում են բացառապես օնլայն տարբերակով, բանկային քարտով՝ PASS Pay համակարգի միջոցով:
- Վճարումը հաջողությամբ կատարելուց հետո, մասնակիցը կստանա մասնակցությունը հաստատող նամակ՝ Էլ. հասցեին և հեռախոսահամարին:

Միջազգային Քննությունների Գրանցման Պայմաններ և Դրույթներ

3. Ուշ գրանցման վճար

- Քննությունների արժեքները բարձրանում են 13,000 Դ-ով, եթե գրանցումը կատարվում է այն ժամանակ, երբ քննությանը մնացել է ավելի քիչ քան 6 շաբաթ: Դա հանդիսանում է ուշ գրանցման վճար, և ամբողջությամբ գանձվում է Cambridge Assessment English-ի կողմից:

4. Գրանցման չեղարկում և հետվերադարձ

- Գրանցումը և վճարումը ավարտին հասցնելուց հետո, գրանցման չեղարկում կատարել հնարավոր չէ:
- Գրանցման չեղարկման և գումարի հետվերադարձի պատճառ կարող են լինել միայն առողջական խնդիրները:
- Վերոնշյալ դեպքերում կատարվում է հետվերադարձ այն բանկային քարտին, որով մասնակիցը կատարել է վճարումը:
- Հետվերադարձ տրվում է միայն բժշկի թղթի առկայության դեպքում:

5. Հետվերադարձի պայմաններ

- Միջազգային քննության գրանցման չեղարկումից հետո հետվերադարձը կատարվում է հետևյալ պայմաններով՝
 - ավելի քան 6 շաբաթ առաջ - տույժ՝ 15%
 - 6-4 շաբաթ առաջ - տույժ՝ 30%
 - 3-2 շաբաթ առաջ - տույժ՝ 50%
 - 1 շաբաթ առաջ - տույժ՝ 70%
 - ավելի քիչ քան 1 շաբաթ առաջ - տույժ՝ 100%

Հետվերադարձը հաշվարկվում է քննության մայր գումարից, ուշ մասնակցության վճարը (առկայության դեպքում) հետվերադարձի ենթակա չէ:

